

պէս նշանակելի հայ գոհարաւաճառի մը, որուն մասին երկար կը խօսի:

«Ես ստիպուած էի Ռօզէդայի մէջ երկշաբաթ մը աւելի մնալ, որու ընթացքին հայ վաճառական մը, որուն առաջին անգամ Լիվոնիոյի մէջ հանդիպած էի, Եփրեմ Սատի անուամբ, կըրցաւ զիս համոզել, որ Հնդկաստան երթալու մասին խորհիմ: Ան հոն եղած էր երկու անգամ, սակայն ոչ յողնութիւնները, որոնց զիմացած էր, եւ ոչ ալ իր անցուցած վրտանգները, կամ իր արդէն ձեռք բերած հարձուածութիւնը զինքը կրնային բռնեւ ճամբորդելու գրգռութենէն, որուն անբացատրելիօրէն ենթակայ է մարդկային միտքը, — բան մը, որ զինքը կը ստիպէ լուր թափառելու սիրոյն թափառիլ, եւ փախչիլ այն հանդիստէն, որը ձեռք բերելն է ճանապարհորդութեան միակ տրամարանելի պատճառը: Սինիօր Եփրեմ զարմանալի հանձարով մարդ մըն էր: Ան կատարելապէս ինը լեզուներ կը խօսէր, որոնց կարգին՝ Անգլիերէն ու Ստորին Հոլանտերէն: Ամենաընդարձակ ծանօթութիւններով օժտուած էր ան աւելի քան որեւէ մէկը, որուն հետ ես երբեք խօսած եմ: Ունէր նաեւ առեւտրական առատաձեռնութիւն մը, որ իրեն կ'ապահովէր նախընտրելիութիւն իր ամէն այցելած վայրի մէջ: Ան կատարելապէս ճարտար էր գոհարագիտութեան եւ ատոր կից բոլոր արհեստներուն մէջ, ծանօթ էր գոհարները յղկելու եւ դամբելու գաղտնիքներուն, այնպէս որ գոհարները իրենց բոլոր առաւելութեամբ երեւային: Ան ունէր նաեւ բազմաթիւ գաղտնիքներ՝ անոնց պակասները ամբողջացնելու եւ դանոնք աւելի փայլուն ընելու համար, այն աստիճան, որ հակառակ իմ այսքան տարի գոհարներու հետ ունեցած կապակցութեանցս, ես ինքզինքս անոր բազդատմամբ կատարեալ սկանակ մը դրտայ, բացի իմ գիտցած Մր. Բուչիի գաղտնիքէս: Ան (հայր) ազնիւ էր, զիւրահազորդ, անկեղծ, բարեսիրտ եւ աշխարհի ամենէն սիրուելիք մարդը, եթէ ան երբեք խորհէր մնալ մէկ վայրի մէջ: Անիկա այժմ Լիվոնիա կ'երթար, ուրկէ մտադիր էր ցամաքով Ֆրանսա

անցնիլ, անկէց ալ Ամսդերտամ եւ Պրուսէլ: Ապա Լոնտոն երթալ կը խորհէր, ուրկէ ծովով Բօրթուկալ, հուսկ անկից անցնիլ Կօա (Հընդկաստան), երբ որ առիթը ներկայանար: Ան այս ամէնը երեք տարուան միջոցին մէջ կը խորհէր կատարել: Յ՛լ տարեկան էր եւ իր ինձի բրած հաւաստմամբ երբեք հիւանդ չէր եղած, բացի ստամոքսի եւ աղեաց մէջ թափառող ցաւէ, որ լողանքով եւ տաք իւղերու օժուով բուժած էր:

«Ես երբեմն ինքզինքս չէի կրնար զսպել իր նախընտրած ճամբորդելու սիրոյն զիմադրելէ, պատճառարանելով թէ առիկա կը կարգէ մեր բնիկ երկրին հանդէպ մեր ունեցած բոլոր սէրը, թէ առիկա (ճամբորդելը) ներհակ է մարդկային բնութեան, թէ այդպէս ողին կը պահուի յարատեւ յուզման մէջ եւ թէ ամէն բանէ վեր մարդը կ'ենթարկուի չ'ակնկալուած վաղահաս մահուան վտանդին: Ան միշտ մեծապէս ուրախ էր, որ այսպիսով առիթ կ'ունենար այս նիւթին շուրջ ցոյց տալու իր պերճախօսութիւնը: Ան կը խնդար իր բնիկ երկրին հանդէպ ունեցած մէկուն սիրոյն վրայ, իրր ծոյլ եւ նեղմիտ դազափար մը: Ան կ'ըսէր, որ մեզ բոլորս մէկ Աստուած ստեղծեց, բոլորս ալ նոյն կերպով աշխարհ կուզանք, եւ երբ անկէ մեկնինք, նոյն դատաւորին առջեւ հաշուետու պիտի ըլլանք: Որով՝ բոլոր մարդիկ եղբայր են, եւ աշխարհ բոլոր մարդոց հայրենիքն է: Իմ մասին, աւելցուց ան, իմ ընտանիքիս մէջ ամէն տեսակ մարդ կը տեսնեմ: Բժիշկս Սպանիացի Հրեայ մըն է, մատակարարս՝ Յոյն մը, գրագիրս՝ Իտալացի մը, երկու ծառաներս՝ Չուիցերիացիներ են, խոհարարս՝ Ճըրանացի, եւ ձիապանս՝ Լօրէնցի բնիկ մը: Մենք՝ բոլորս ալ միատեղ կը բնակինք երջանկարար, եւ բոլորս ալ իրարու հայրենակից կը հաշուենք: Իսկ զալով մարդկային բնութեան, բոաւ ան, անոր մէջ ճամբորդութեան հանդէպ ներհակութիւն չի կրնար ըլլալ, աւելի քան ինչ որ կայ ուրիշ շարժմանց մէջ: Ասկէ դատ, մարդկային բնութենէն աւելի փոփոխական ոչինչ կայ, որով՝ ամէն մարդ իրա-